«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Իռա Փանոսյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ, տ.գ.թ.
Ira-panosyan@mail.ru

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան եզրին՝ Փոքր Կովկասի հարավ-արևելքում: Ընդհանուր տարածքը 1143.7 հազ. հա է, որից գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 592.68 հազ. հա (վարելահողեր՝ 137.82 հազ. հա, բազմամյա տնկարկներ՝ 9.78 հազ. հա, խոտհարքներ՝ 36.01, արոտներ՝ 376.17 հազ. հա, այլհողատեսքեր՝ 32.90 հազ. հա)[1]: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2016 թ. կազմել է 68467,6 մլն դրամ, որից բուսաբուծություն՝ 36024,2 մլն դրամ, անասնաբուծություն՝ 32443,4 մլն դրամ[2]: Ներկայացված տվյալների հիման վրա ԼՂՀ-ում 2016թ. միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1.67 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1.57 հա վարելահող: 1 հա գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվով համախառն արտադրանքը կազմում է 115 654 դրամ, իսկ 1 գյուղացիական տնտեսության հաշվով համախառն արտադրանքը կազմում է 3726127,8 դրամ, որոնք անհամեմատ ցածր ցուցանիշներ են:

Նոր արտադրահարաբերություններով պայմանավորված՝ տնտեսության ազատականացումը, հողի և գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղատնտեսական մթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը զգալիորեն դժվար ու լուրջ խնդիրներ են առաջադրում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների համար, որոնց լուծումը պահանջում է լրացուցիչ պետական միջամտություն և աջակցություն:

Ելնելով ագրարային ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության ապահովման առաջնահերթությունից՝ անցումային ժամանակահատվածում գյուղատնտեսության պետական աջակցությունը պետք է շարունակվի՝ ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորման, գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողների գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովման, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրման, ենթակառուցվածքների, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի ձևավորման ու զարգացման ուղղություններով: Վերջինս վերաբերվում է հատկապես այնպիսի մի կարևոր գործոնի, ինչպիսին խորհրդատվությունն է, որը գյուղատնտեսության ինտենսիվացման և արտադրողականության բարձրացման հիմնական միջոցներից մեկն է:

---

[1] Ծրագիր Լեռնային Ղարաբաղի հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության, minagro.nkr.am

[2] Լեռնային Ղարաբաղի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, http://stat-nkr.am

Անկախացուցից հետո ՀՀ-ում գործող <<Ագրոգիտասփյուռ>> ծառայությունը մեկ գործակալություն ստեղծեց ԼՂՀ-ում: Այն ժամանակին որոշակի դեր է ունեցել, սակայն ներկայումս ամբողջովին անտեսվել է, ու չի գործում: Դա է նաև այն պատճառներից մեկը, որ ԼՂՀ գյուղացիական տնտեսություններում ոչ միայն ցածր են մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության ցուցանիշները, այլև ապահովված չէ կայունությունը ըստ տարիների (Աղյուսակ 1, 2)[1]:

Աղյուսակ 1-ի տվյալների վերլուծության արդյունքները վկայում են, որ թեև 2015 թվականին 2011 թվականի նկատմամբ հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը ավելացել է 37,5 % -ով, կարտոֆիլի, ծխախոտի ու բանջարեղենի բերքատվության մակարդակները ունեցել են նվազման միտում:

Աղյուսակ 1.

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, g/հա

Մշակաբույսեր	Տարիներ					
	2011	2012	2013	2014	2015	2016
Հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսեր	19,2	17.7	19,1	12,7	26,4	25,2
Կարտոֆիլ	97,1	100,8	110,4	84,3	60,7	80,5
Բանջարեղեն	81,4*	90,2*	102,0*	77,2*	81,5*	114,3

*Հաշվարկների մեջ ներառված չեն ջերմոցներից հավաքված բերքը

Հացահատիկի և հատիկաընդեղեն մշակաբույսերի բերքատվության մակարդակի ցուցանիշների անկումը 2016թ.-ին 2015 թ.-ի համեմատ հիմնական պատճառը նոր, կլիմայական փոփոխություններին ադապտացվող, ինտենսիվ տեխնոլոգիաների բացակայությունը և գիտություն-կրթություն-արտադրություն կապի թույլ լինելն է: Թեև կան որոշ առաջավոր տնտեսություններ, որոնք ձեռք են բերել նոր տեխնիկա և տեխնոլոգիաներ ու վարում են ինտենսիվ գյուղատնտեսություն, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռ գյուղատնտեսությամբ զբաղվողների մի մասը տեղյակ չէ առաջավոր տեխնոլոգիաներին, նրանց ներդրմանն ու տեխնոլոգիական գործընթացի կազմակերպմանը:

Աղյուսակ 2.

Անասունների և թռչունների մթերատվությունը

Ցուցանիշներ	Չափման միավոր	Տարիներ				
		2011	2012	2013	2014	2015
Մեկ կովի կաթնատվությունը	կգ	1691,0	1661,0	1716,0	1940,0	2146,0
Մեկ ոչխարի միջին տարեկան բրդատվությունը	կգ	3,52	2,67	2,1	2,8	3,1
Ածան հավերի միջին տարեկան ձվատվությունը	հատ	134	144	147	193	190

[1] Աղյուսակային տվյալները վերցվել Լեռնային Ղարաբաղի հանրապետության 2009-2015 թվականների վիճակագրական տարեգրքից, http://stat-nkr.am

Նույն վիճակը նկատվում է նաև անասնաբուծության ոլորտում: Թեև կովերի կաթնատվությունը և հավերի ձվատվությունը 2015 թվականին 2011 թվականի նկատմամբ ավելացել են, սակայն դեռևս ցուցանիշները ցածր են հնարավորություններից:

Սակայն պետք է նշել, որ որոշ գյուղերի գյուղացիական տնտեսություններում՝ Բերդաշեն, Ակնա, Ուխտասար, Բերքաձոր, որտեղ կիրառվում են նոր տեխնոլոգիաներ և այն զուգակցվում է մասնագիտական խորհրդատվության հետ, այդ տնտեսություններում նշանակալիորեն բարձր են արտադրատնտեսական ցուցանիշները:

Գյուղատնտեսության արտադրատնտեսական ցուցանիշների բարձրացման գործում էական դերակատարում կունենա գյուղական բնակավայրերում գիտելիքահենք հասարակության ձևավորումը, որին, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները, կնպաստի գյուղատնտեսության խորհրդատվական ծառայությունների ձևավորումը:

Հաշվի առնելով երկրի աշխարհաքաղաքական վիճակը, գյուղատնտեսության զարգացման տեմպերը և հնարավորությունները ուսումնասիրել ենք Իսրայելի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման փորձերը և հիմնավորել ներդրման հնարավորությունները Արցախի հանրապետությունում:

Պատերազմական իրավիճակում գտնվող երկրներից մեկի Իսրայելի փորձը վկայումէ, որ գյուղատնտեսության ինտենսիվացման և մրցունակության բարձրացման գործում էական դեր կարող է ունենալ գիտական-հետազոտական-խորհրդատվական համակարգը, որը տարբեր երկրներում դիտվում է որպես նոր և առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացման, գիտություն-կրթություն-արտադրություն կապը ապահովող հիմնական գործիքը:

Իսրայելը, փոքր տարածք և սահմանափակ բնական ու ֆինանսական ռեսուրսներ ունեցող պետությունը, շարունակական ռազմական հակամարտության մեջ լինելով իր հարևանների մի մասի հետ՝ ստիպված էր անընդհատ որոնել ոչ ստանդարտ՝ ստեղծագործական լուծումներ՝ երկրի առաջընթացի ապահովման համար: Դրանք տեղ գտան ոչ միայն ռազմական արդյունաբերությունում, այլև անմիջապես ներդրվեցին նյութակա նարտադրության հիմնական ճյուղերում: Դրա շնորհիվ ներկայումս Իսրայելն աշխարհում գրավում է ԱՄՆ-ից հետո երկրորդ տեղը՝բարձր տեխնոլոգիաների բնագավառում ինովացիոն և շուկայական ուղղվածություն ունեցող ապրանք արտադրող նոր ընկերությունների ստեղծման գործում:

Ավտոմատացման, մեքենայացման և հետբերքավաքի տեխնոլոգիաների շնորհիվ գյուղատնտեսությունը նշանակալի փոխակերպումների է ենթարկվել: Արդի անասնաբուծական տնտեսություններն ամբողջովին կառավարվում են մեքենաներով, մասնավորապես ավտոմատացված են կերակրման, կթի, փաթեթավորման, պիտակավորման և որակի վերահսկողության հետ կապված գործառնությունները: Թռչնաբուծարանները կիրառում են ստանդարտացված չափերի արտադրության, սպանդի, սառեցման և փաթեթավորման ավտոմատացված տեխնոլոգիաներ: Մրգատու այգիները և ջերմոցային տնտեսությունները նախկինում ինտենսիվ ձեռքի աշխատանք էին պահանջում, մինչդեռ ներկայումս մեքենաներ են օգտագործում պտուղ բանջարեղենը տնկելու, ջրելու, պարարտացնելու, բերքահավաքի, տեսակավորման համար: Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ոչ միայն կրճատել մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունը, այլ նաև արդյունավետ և ռեսուրսախնայող են

դարձնում գյուղատնտեսությունը (Ford, 2015): Խորհրդատվական ծառայությունների դերակատարումը այստեղ շատ մեծ է, քանի որ նրանք այս տեխնոլոգիաների տարածման հիմնական միջոց նեն:

Իսրայելի նախկին վարչապետ Շիմոն Պերեսը Խաղաղության նոբելյան մրցանակ ստանալիս իր ելույթում նշում է. Իսրայելը, որը հիմնականում անապատային երկիր էր, գյուղատնտեսության ոլորտում գիտական լուծումների ներդրման շնորհիվ, առանց ջրային ռեսուրսների կամ տարածքի ընդարձակման բարձր բերքատվություն է ապահովում (Peres, 1999)[1]: Այս համատեքստում ԼՂՀ-ն ուրիշ այլընտրանք, քան գիտության և նորագույն տեխնոլոգիաների մեջ ներդրումների միջոցով գյուղատնտեսության զարգացումը, չունի: Իսկ դա պետք է ապահովի միայն լիարժեք և մշտապես գործող խորհրդատվական համակարգի միջոցով:

Այս առումով ԼՂՀ-ում ստեղծված հիմքերը հնարավորություն են տալիս ագրարային ոլորտում ներդնել համալսարանական խորհրդատվական համակարգ՝ որի միջոցով սերտ կապեր կստեղծվեն գիտնականի և արտադրողի միջև և առանց դժվարությունների գիտության նվաճումները արագորեն կներդրվեն արտադրության մեջ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ԼՂՀ-ի մասնաճյուղի հիման վրա կարելի է ներդրնել համալսարանական խորհրդատվական համակարգ, որը կղեկավարվի համալսարանի կողմից, բայց ֆինանսավորման համար կարելի է ստեղծել գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ՝ ՀՀ-ի ներկայիս փորձից ելնելով: Համալսարանական մոդելի ներդրման առաջարկն հիմնավորելու համար կատարվել է ՈՒԹՀՍ վերլուծություն, որը մեկ անգամ ևս փաստում է մոդելի առավելությունների մասին:

Աղյուսակ 3

Համալսարանական մոդելի ՈՒԹՀՍ վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
-ընդգրկում է խորհրդատվական հարցերի լայն շրջանակ, -առավելագույնս ինտեգրացնում է կիրառական գիտական հետազոտությունները, ուսուցումները և խորհրդատվությունը: -համակարգն ամբողջությամբ իր գործունեությունը ծավալում է պետական ուսումնական հաստատությունների հիմքի վրա, - սերտ կապի մեջ է տարբեր գիտահետազոտական կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների և ղեկավարների հետ: -ապրանքարտադրողի վստահությունը խորհրդատու մասնագետի նկատմամբ բավականին մեծ է, -գոյություն ունի սերտ կապ ուսանողների և	-արդյունավետ չէ առևտրային գործունեություն ծավալելիս: -հնարավորությունները սահմանափակ են և չկան համապատասխան ռեսուրսներ:

[1] ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների խթանման ուղիները քաղաքականության բարելավման առաջարկություններ, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն, Երևան 2017, էջ 4,

մասնագետների միջև: -համալսարանական համակարգն ունի բավականին մեծ անկախություն և ինքնուրույնություն:	
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
-համակարգը հնարավորություն ունի օգ-տագործելու ուսումնական հաստատության հզոր նյութատեխնիկական, ուսումնա-մեթոդական բազաները: -խորհրդատվական ծառայությունների մատուցմանը մասնակից են լինում փորձ և բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը, գործընթացին նպաստում է մասնագիտացված տարբեր լաբորատորիաների առկայությունը	-համակարգը հնարավորություն ունի օգ-տագործելու ուսումնական հաստատության հզոր նյութատեխնիկական, ուսումնա-մեթոդական բազաները: -խորհրդատվական ծառայությունների մատուցմանը մասնակից են լինում փորձ և բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը, գործընթացին նպաստում է մասնագիտացված տարբեր լաբորատորիաների առկայությունը

Ուսումնասիրության արդյունքներից ելնելով հանգում ենք այն եզրահանգման, որ համալսարանական խորհրդատվական համակարգի գործունեությունը կնպաստի գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանը, ինչն էլ կնպաստի ԼՂՀ-ի գյուղատնտեսական մթերքների միջազգային շուկաներում ճանաչմանը:

Իրա Փանոսյան

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Բանալի բառեր՝ գիտություն-կրթություն-արտադրություն շղթա, ագրարային խորհրդատվական համակարգ, գիտական նվաճումներ

Հոդվածում խնդիր է դրվել ուսումնասիրել գյուղատնտեսության արտադրության վիճակը, բացահայտել ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման գործում խորհրդատվական համակարգի ներդրման անհրաժեշտությունը, հիմնավորել գիտախորհրդատվական ծառայությունների դերը, որպես գյուղատնտեսության զարգացման կարևոր գործոններից մեկը: Հոդվածում բերված են Իսրայելի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության խորհրդատվական համակարգերի փորձերի վերաբերյալ նյութեր, կատարվել է համալսարանական խորհրդատվական համակարգի ՈՒԹՀՍ վերլուծություն, որոնց հիման վրա հիմնավորվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Արցախի մասնաճյուղի բազայի հիման վրա ագրարային խորհրդատվական համակարգի ներդրման հնարավորությունները:

Ира Паносян

КОНСУЛЬТИРОВАНИЕ КАК ФАКТОР ПОВЫШЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Ключевые слова: *цепь наука-образование-производство, сельскохозяйственная консультативная система, научные достижения*

В статье поставлена цель изучить ситуацию сельскохозяйственного производства, выявить необходимость внедрения консультативной системы в вопросе интенсивного развития сельского хозяйства, обосновать роль научно-консультативных услуг в качестве одного из важных факторов для развития сельского хозяйства. В статье приводятся примеры материалов по опытам в сельскохозяйственных консультативных системах в Израиле и Республике Армения, был проведен SWOT анализ консультативной системы университета, на основе которого были обоснованы возможности внедрения аграрной консультативной системы на базе Арцахского филиала Национального аграрного университета Армении.

Ira Panosyan

CONSULTING AS A FACTOR TO RAISE THE COMPETITIVENESS OF THE AGRICULTURE OF THE ARTSAKH REPUBLIC

Key words: *Science-Education-Production chain, agrarian consulting system, scientific achievements*

The main issue in the article is to investigate the situation of agricultural production, to discover the necessity of investing Agrarian Consulting System in the development of Agriculture, to justify the role of scientific-consulting services as one of the factors in the development of Agriculture. There are some materials about the experiences of Consulting systems in Israel and Armenia. SWOT analyses of academic Consulting systems have been made and based on these the opportunities of investing Agrarian Consulting Systemshave been justified on the base of the branch of Armenian National Agrarian University in Artsakh.